Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «ՀԱՄԱՍՏԵՂԸ ԵՎ ՆՐԱ «*ԱՌԱՋԻՆ ՍԵՐ*» ՎԻՊԱԿԸ»

Կատարող՝ Խաչատրյան Արևիկ

Դպրոց՝ հ. 19 հիմնական դպրոց

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան №65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Բովանդակություն

1. Ներածություն
2. Համաստեղի գրական ուղղության հարցը
3. Համաստեղի պատմվածքները
4. Համաստեղի առաջին սեր վիպակը
5. Եզրահանգում

ՀԱՄԱՍՏԵՂԸ ԵՎ ՆՐԱ «*ԱՌԱՋԻՆ ՍԵՐ*» ՎԻՊԱԿԸ

Ներածություն

Հայ հասարակության պատմության մեջ դժվար է մատնանշել ավելի բարդ ժամանակաշրջան, քան 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներն էին: Եվ դա ոչ միայն քաղաքական-սոցիալական իրադրության, այլև մշակութային-գեղագիտական խմորումների իմաստով: 20-րդ դարասկիզբը եղավ շրջադարձային: Ո՞րն է շրջադարձի բուն էությունը: Մինչ 19-րդ դարի գրականությունը «կաշկանդված» էր որոշ նյութերի շրջանակներում՝ գերազանցորեն ազգային պատմության և ազատագրական մաքառումների հորձանուտում, մինչ 19-րդ դարում մեր գրողները դեռևս ամբողջ ձայնով չէին արտացոլում մարդու ներքին հարուստ կյանքը, նրա վառ անհատականությունը, 20-րդ դարի գրականությունը կարողանում է նվաճել կյանքի ավելի ընդարձակ սահմանագծեր և ավելի տարողունակ շերտեր: Նկատելի է, թե ինչքան լայն տեղ է բացվում անհատական ապրումների հնչեցման համար:

Հին արժեքների վերագնահատության ժամանակաշրջանն էր. հասարակական կյանքը շնչում էր նոր գաղափարներով, արմատապես նորոգվում էին գեղարվեստական ճաշակն ու գեղագիտական ըմբռնումները: 20-40-ական թվականներին սփյուռքահայ գրականությունը ներկայանում էր իբրև երկու գրական շարժումների պայքարի թատերաբեմ: Կարոտի և Նահանջի առճակատումը հարստացնում, բազմերանգ ու գունեղ է դարձնում Սփյուռի գրականությունը: Երկու բևեռներում կան ձևավորված տաղանդավոր գրողներ: Երբեմն Կարոտի և Նահանջի գրական շարժումներում կարելի է որսալ ռեալիզմի ու ռոմանտիզմի հակադրության դրսևորումները:

***

Սփյուռքահայ իրականության մեջ նոր ուղիներ բացողներից մեկը եղավ Համաստեղը: Կարոտի գրականության առաջնորդ Համաստեղն ուղղակի գամում է հեռուներում գտնվող ընթերցողին հայրենի եզերքին:

Կյանքի ոդիսականը սկսելով ծննդավայրում՝ Խարբերդի Փերչենճ գյուղում, Համաստեղն իր գրական ճանապարհը հարթեց ամերիկյան հողում: Թեպետ ապրում էր շեն ու շռայլ քաղաքում, բայց նրա սիրտը միշտ լեռներում էր, միշտ կարոտների հորձանուտում: Աշխարհից մեկուսացած՝ Ղովտի կնոջ նման ուզում է ետ դառնալ, բայց հայրենիք տանող ճանապարհներն այլևս փակ են, և նա քարանում է:

Նախ անդրադառնանք այն տարաբնույթ գիտական կարծիքներին, որ տարիներ շարունակ ու մինչև օրս էլ ուղեկցել, ուղեկցում են նրան գրականության շարունակական ճանապարհին:

Համաստեղի գրական ուղղության հարցադրումը հայ գրականության մեջ միանշանակորեն չի ընկալվել: Ինչո՞վ է բացատրվում գիտական վերաբերմունքի այս տարօրինակ երկվությունը:

Առաջին շփոթը գրականության պատմության մեջ բերում է Արշակ Չոպանյանը, որն առաջին գրքի առիթով հրապարակավ հայտարարում է, թե «*Համաստեղ՝ Շիրվանզադեեն ի վեր մեր մեջ երևցած ամենեն ճշմարիտ ու կատարյալ իրապաշտն է*»: Նա շփոթում է գյուղագրության և գրական ճշմարտության սահմանները: Ամեն

գյուղագիր՝ նյութի ընդգրկումով, դեռևս իրապաշտ չէ: Նույնը չէ՞ր Մուրացանի պարագան, որը ռոմանտիկ էր, բայց նկարագրում էր գյուղը:

Հավանաբար, Արշակ Չոպանյանը նկատի ուներ ոչ այնքան գրական ուղղության խնդիրը. խոսքը մասնավորվում է գրողի ճանաչողական դերի գնահատությամբ, որը, պետք է ընդունել, միակողմանի հայացքի արդյունք է:

Իրապաշտությունը՝ իբրև գրական ուղղություն, Համաստեղի համար փորձեցին ամրագրել նաև Ալ. Շիրվանզադեն ու Ավ. Իսահակյանը: Մեր օրերում այն պաշտպանելու փորձերով հանդես են գալիս հայրենի գրականագետներ Վազգեն Գաբրիելյանը և Մարգարիտ Խաչատրյանը:

Ինչ վերաբերում է հայ քննադատական ռեալիզմի հսկային, պետք է նշել ,որ իրեն անհրաժեշտ էր ունենալ դպրոցի շարունակականության հարցը նաև արևմտահայ նորագույն շրջանակից: Բանն այն է, որ 1920 թվականին մի ամբողջ տարի Շիրվանզադեն ապրում էր Նյու-Յորքում և գրեթե ամեն երեկո զրուցում դեռևս անհայտ հրաշամանուկի հետ: 1924 թվականին, երբ Բոստոնում լույս է տեսնում Համաստեղի «Գյուղը» ժողովածուն, որով նա հաստատուն տեղ գրավեց հայ արձակի մեծերի շարքում, Շիրվանզադեն հպարտությամբ հայտարարում է, թե «… *ես փրկեցի Համաստեղը*» ՝ գտնելով, որ մինչ իր հետ գրականության շուրջ զրույցները, Համաստեղը սավառնում էր երկինքներում, և ինքն է նրան իջեցրել երկիր, գետին, իրականությունը դարձրել նրա ստեղծագործության կիզակետ:

Եվ երբ Իսահակյանը համերաշխորեն կրկնում է այս խոսքերը, հաստատում է, որ ինքը և Շիրվանզադեն Համաստեղին դիտում են ռեալիստական ճամբարում:

Այսօր էլ վիճարկությունների նյութ դարձած բանավեճը կարծես չի ավարտվել:

Լիբանանահայ գրականագետ Գր. Շահինյանը գրում է. «*Իրապաշտութեան ամբողջ ըմբռնում մը ունի Համաստեղ: Իր գրականութեան ամբողջ խորքը գիւղի կամ Ամերիկայի իրականութենէն կուգայ, բայց ինք անհրաժեշտ ընտրութիւնն ու մշակումը կը մտցնէ անոր մէջ՝ իրապաշտ, կեանքով բաբախուն, բայց նաեւ արուեստի շունչով օծուն պատմուածքներ տալու համար: Այսպէս է, որ կը յաջողի վառ գոյներով ու յստակ շարժումներով պատկերացնել, մեր աչքին առաջ, հայ գիւղն ու անոր տիպարները*» :

Գրականագետ Ս. Դանիելյանը Համաստեղին անվանում է ռոմանտիկ՝ իր կարծիքը հիմնավորելով այսպես. «*Համաստեղի ռոմանտիկական համակարգը մեզ պարզում է գրական ուղղության անխառն վիճակները, նա զտարյուն վիպային աշխարհ ունի, որը կարելի է հաստատագրել ոչ միայն ընկալումներում, կառուցողական դաշտում, այլև վերաբերմունքի, գրչի հմայիչ խաղի, ոճավորման գծի վրա: Գրողի մոտ պատկերը, դիմանկարը, հիշատակը, հումորը, հոգեվիճակը գործողության հանդեպ երբեմն գերազանցություն են ստանում: Գործողությունը հաշտ չէ մասնավորապես ներկա ժամանակին: Հեղինակի ընդհատ-ընդհատ միջամտության շնորհիվ պատմվածքի սյուժեն հաճախ տեղաշարժվում է դեպի հուշ, անցյալ, դեպի վիպապաշտ ազգային հավաքական մթնոլորտ:*

Անցյալը Համաստեղի համար ամենից երջանիկ ժամանակն է, իսկ դա նրա ռոմանտիզմի թերևս գլխավոր արտահայտությունն է» :

Գրաքննադատ Վ. Գաբրիելյանը ժամանակին կատարել է հետևյալ եզրահանգումը, թե Համաստեղը պատկերում է գյուղը, ուրեմն ունի «կոնկրետ ռեալիստական մտածողություն»: Բանն այն է, որ մեր գրականության պատմության

մեջ գրական ուղղությունների որոշակիությունը շատ հաճախ ճշտվում էր ըստ այն բանի, թե ինչ է ներկայացրել հեղինակը, որը սխալ մեկնակետ է: Քանզի նյութը չէ, որ որոշում է գրողի գրական ուղղության խնդիրը :

Թերևս կարելի է շարունակել գրողների, գրաքննադատների կարծիքները Համաստեղի գրական ուղղության շուրջ: Շատ շատերն են քննել այդ հարցը, հիմնավորել իրենց կարծիքները՝ հենվելով գրողի այս կամ այն ստեղծագործության վրա:

Վերջապես, ռոմանտիզմի և ռեալիզմի բանավեճում հարկավոր է լսել նաև հենց իրեն՝ Համաստեղին: 30-ական թվականներին, երբ սկսել էր շարադրել և «Հայրենիք» ամսագրի էջերում հատված առ հատված տպագրել «Սպիտակ ձիավոր» վեպը, ուշագրավ մի դատողություն է անում. «*Հայ ժողովուրդը, - խորհրդածում է Համաստեղը,- ռոմանթիք է իր ապրումներով, իր հաւատքով ու հերոսներով:*

Առաւելապէս այդ շաղախին կը պարտի իր գոյութիւնը, այլապէս եթէ յանկարծ գիտակցէր տառապանքի իրականութեան, ան վաղուց կը չքանար որպէս ազգ»:

Ավելի ուշ շրջանում, անդրադառնալով իր ստեղծագործության մեջ ռոմանտիզմի և ռեալիզմի հարաբերության խնդիրներին՝ Համաստեղը «Ցուցատախտակ» պատմվածքի մեջ հետաքրքիր խոստովանություն է անում. «*Այն օրերուն իրականությունը ինծի համար գեղեցիկ չէր: …Կուզեի ստեղծել աշխարհ մը, որ անմատչելի էր, մանավանդ անիրական*» :

Ի վերջո, նկատելի է նաև, որ նրա ռոմանտիզմը հանդես է եկել փոխթափանցված սիմվոլիզմի հետ: Եվ այդ յուրահատուկ շաղախը նրա ստեղծագործությանը հաղորդել է ոճային-կառուցողական յուրահատկություն:

Մի առիթով նա գրում է. «*Ես միշտ իմ հոգու մեջ կզգամ «Կապույտ թռչունը», որը ճախրել կուզե, կուզե անցնել ֆիզիկական այն տարածքը, ուր կբաբախի հայու սիրտը*»:

«Կապույտ թռչունը»՝ իբրև սիմվոլիզմի արտահայտություն, գալիս է բելգիացի աշխարհահռչակ բանաստեղծ և թատերագիր Մորիս Մետերլինկից:

Գեղարվեստական շաղախով լինելով ռոմանտիկ՝ Համաստեղը որդեգրել է նաև երևույթներն իրենց կատարյալ կերպարանքի մեջ հայտնագործելու կեցվածքը: Միանգամայն հեռու մնալով երևույթների արտաքին կեղևը ներկայացնելուց՝ հակված է դեպի նույն երևույթի հուզական, փիլիսոփայական խորացումները, դեպի իրերի էության ճանաչումը:

Ինչո՞ւմն է Համաստեղի բերած նորությունը: Կենսական ի՞նչ ճշմարտություններ բացահայտեց նա, որ կարողացավ նվաճել իր ժողովրդի սերը: Գրողի ընդունելությունը պայմանավորված է այն ինքնատիպ մտահոգությամբ, որ բերում է նա իր ստեղծագործությամբ: Ընդգծված նորություններ չի բերում, բովանդակային ու ժանրային առումով նոր ուղիներ չի բացում, բայց առանձնանում է նյութի նկատմամբ իր վերաբերմունքով: Նրա գերագույն նպատակն էր ժամանակի էությունը գեղարվեստորեն բանաձևելու այն անկասելի ցանկությունը, որն իմաստավորեց նրա կատարած գործը և արժեւորեց նրա տեղը հասարակության մեջ:

Սերգեյ Եսենինը մի առիթով ասել է, որ գրականության մեջ շատ մեծ բան է «սեփական շապիկ» ունենալը. փոխարինաբար վերցրածը, թեկուզ և ավելի շքեղ, նույն գինը չունի, ինչ սեփական շապիկը»:

Սխալ է կարծել, թե հայ գրականությունն անցյալում հեռու է կանգնած եղել ժողովրդի տառապանքներից ու մաքառումից: Համաստեղը խնդիր է դնում ավելի մոտ կանգնել կյանքին, ժողովրդական աշխարհին ու տարերքին, այստեղից քաղել ոչ միայն նյութը, այլև մարդկային էության բովանդակությունը:

Համաստեղը ոչ թե թեմատիկորեն, այլ գեղագիտորեն նվաճեց ժողովրդական աշխարհն ու տարերքը:

Մինչ շատերը նրա նախորդներից ու ժամանակակիցներից հայ գյուղացուն ներկայացնում էին կամ սոցիալական ծանր իրադրության պայմաններում, կամ ցածր ու վայրենի էությամբ, մինչ ուրիշները գյուղը ներկայացնում էին որպես հավիտենական անշարժության միջնաբերդ, նույն այդ աշխարհում Համաստեղը որոնեց և գտավ կյանքի բանաստեղծական բովանդակությունը, ժողովրդական ոգու արիության ուժը: Կարողացավ վեր հանել գյուղի այն հոգևոր արժեքները, որոնք կոչված էին էական դեր խաղալու հայրենիքի կառուցման ապագա ուղիներում:

***

Նշենք, որ բազմաժանր գրող է Համաստեղը: Տարբեր ժանրերով (չափածո և արձակ բանաստեղծություն, վեպ ու վիպակ, պատմվածք ու հեքիաթ, դրամա ու հոդված) ստեղծագործություններն ունեն լուրջ արժեք:

Որպես «կարոտի գրականության» կարկառուն օրինակներ՝ առաջնային են հատկապես «Գյուղը» (1924) և «Անձրև» (1929) պատմվածքների ժողովածուները, որոնցից երկրորդը լույս տեսավ Փարիզում՝ Համաստեղի առաջին շրջագայության ժամանակ:

Համաստեղն իր գրական-ստեղծագործական հինգ տասնամյակի ընթացքում հրապարակել է նաև «Սպիտակ ձիավորը» վեպը՝ երկու հատորով (սկզբում «Հայրենիք ամսագրում»՝ պարբերաբար, երկու տասնամյակ հետո՝ 1952-ին գրքով՝ Լոս Անջելեսում), «Քաջ Նազար և 13 պատմվածքները» (Կահիրեում՝ 1955 թ.), «Աղոթարանը» (Բեյրութում՝ 1957 թ.) և վերջապես «Առաջին սերը» (Բեյրութում՝ 1966թ.):

Անդրադառնանք պատմվածքներին, որոնց մեջ հստակորեն արտացոլվում է նրա ռոմանտիզմը: Նյութը միայնության դատապարտված մարդկային ճակատագրերն են: Մարդիկ, որոնք կյանքում որոնում են իրենց հոգեկան, բարոյական և ազգային հիմքերը: Այս տեսակետից նրա պատմվածքներում առաջին գծի վրա է մարդը, ժամանակակից մարդը՝ իր հոգեկան անասելի ալեկոծումներով, ինքն իր առջև կանգնած ինքնավերլուծությամբ և այս աշխարհում իրեն տրվածը ճշտելու պահանջով:

Ընդունված է ասել, թե գյուղի երգիչ է Համաստեղը: Իր պատմվածքների մեծ մասի նյութը ընտրել է գյուղաշխարհից՝ հավատարիմ մնալով Թումանյանի ու հատկապես իր հայրենակիցների՝ գավառական գրականության նշանավոր դեմքեր Թլկատինցու և Ռ. Զարդարյանի ավանդներին: Միտումը նպատակային էր՝ իրականության մեջ անդարձ կորցրածը փրկել ու պահել գրականության մեջ, ամրագրել սերունդների համար:

Գյուղագիր է՝ ոչ նյութի հասկացողության սահմանափակ մտքով, այլ ժողովրդագրության տարերքի իմաստով: Այնպես, ինչպես արևելյան հատվածում որոշ չափով Ա. Բակունցն էր:

Համաստեղի պատմվածքներում պատկեր առ պատկեր ոգի է առնում մի աշխարհ, ուր կան հող ու երկինք, ցավեր ու հրճվանքներ, աշխատանք ու համբերություն, հեքիաթների հետևից վազող մանուկներ, ուր բուռն ընթացքով հորդում է սովորական, բնական, պարզից էլ պարզ կենցաղը:

«*Զարմանալի մտերմութիւն մը կար*,- գրում է Համաստեղը,- *սուրբերու, աստղերի եւ գիւղացիների միջեւ, ես հիմա կը տարուիմ ըսելու, որ այդ գիւղի երկինքը ուրիշ էր, ուրիշ էին նաեւ գիւղացիները: Անցած են երկար-երկար տարիներ, եւ դեռ թարմ կերպով կը յիշեմ քարաշէն կամուրջներին ինկած քարերը, բարդիի վրայ օրօրուող ագռաւը, եկեղեցիին շարակնոցին այն էջը, որի վրայ ծէթ թափած էր, ինչու չէ, նաեւ գիւղի աղջիկները, որոնք կը ջերմացնէին ու թեւ կուտային մեր առաջի երեւակայութեան*» :

Համաստեղի դրվատած գյուղը հովվերգական անխռով գյուղ չէ միայն: Ունի իր հոգսերն ու հառաչանքները, իր անդարմանալի ցավերը: «Զրույց շունի մը հետ» պետմվածքում նա նորոգում է հին ռոմանտիկական տեսլապատկերները, որոնք

«*…Հեքիաթ էր իմ գյուղը… այգիների ճամբան… ինչպես պատմեմ իմ գյուղի բարությունը հեքիաթային, աղջիկները իմ գյուղի, արշալույսը, վերջալույսը, սերը, քենը, հարսանիքն ու պարը, կալը, կտուրը, ցանն ու ցանքը, ցուլն ու ցորյանն իմ գյուղի*» :

Փորձեց գտնել գյուղում ապրող մարդկանց էության մեջ ձևավորվող այն ապրումներն ու խոհերը, հայտնաբերել այն գլխավոր հոգեկան վիճակները, հարաբերությունները և կենսական մտահոգությունները, որոնցով ապրում են մարդիկ: Կարողացավ գտնել ժողովրդի հոգին:

Համաստեղի հերոսները գյուղացի մարդիկ են՝ իրենց հող ու ջրի անասուններին նվիրված: Կյանքի վերջին Սիմոն Վրացյանին գրած նշանավոր նամակում Համաստեղը գրում է. «*Մեր ժողովրդին փիլիսոփայության համաշխարհային արժեքները՝ Հեգելի, Կանդի փիլիսոփայությունը բոլորովին պետք չէ: Դրա փոխարեն երկու լծվող եզ, դրա փոխարեն չորս հազար փեթակ, և հայ գյուղացին կապրի իր հող ու ջրի հետ ամենօրյա աշխատանքով*»:

Դրա փայլուն օրինակներից է Տափան Մարգարը, որը նույնանուն պատմվածքում մի նախասկիզբ է՝ ծուլված բնությանը, նրա տարերքին: Անասունն ու հողը նրա կյանքի իմաստն են և միասնությունը. գոմեշները՝ իր էության փոխակերպությունը, և ոչ մի դժնդակ հարված, բնության փոխակերպում նրան չի օտարում իր սկզբից և նախնականությունից: «Աղի արձան է» (ինչպես կինն է ասում), տիպարի քանդակ, և չի «ընդհատվում» նրա էությունը բնության վթարով:

Ո՞վ է Տափան Մարգարը. մի մարդ՝ սովորական մի մարդ, ով սիրում է անասուններին ու իր հողը, սիրում է անասելի սիրով ու նվիրվածությամբ:

Ինչու՞ հիշեցի հատկապես այս պատմվածքը: Որովհետև ցանկացա ընդգծել այն մեծ զուգահեռը, որ գծվում է նրա և Համաստեղի կյանքի միջև:

Համաստեղը՝ «Տափան Մարգար»-ի հեղինակը, ինքն էլ մի յուրօրինակ Տափան Մարգար է մեր գրականության մեջ, Մարգար, որ նույն կրքով ու սիրով նվիրվեց հայ գրականությանն ու հայոց լեզվին և երբ մահացավ, շրթներին հայոց գիրն էր՝ նման իր հերոսին, որի շրթներին մահվան մահճում կիսատ թողած հերկի և «որբացած» գոմեշների մտահոգությունն էր:

Տափան Մարգարի մի ուրիշ տեսակն է Փիլիկ աղբարը, որը սիրում էր անասուններին, սիրում նույն կորստաբեր սիրով, ինչպես Ա. Բակունցի Պետին: Փիլիկ աղբարը նույն «խեղճն» է, սակայն, ինչպես Օվանը («Փեսա Օվանը»): Փիլիկը չունի սեփականություն: Հաճախ մի փոր հացի համար անվարձ աշխատում է, և մարդիկ չարաշահում են նրա նվիրվածությունը: Երբ կորցնում է ուժը, մերժում են նրան… նրա հետ՝ նաև ծերացած ձիուն, որ միակն է մահվան «թափորում» կերպարի ճակատագրի վերջույթում…

Էականն այս պատումի առանցքում անհատի յուրօրինակ ճակատագրի և ընդհանրական կենսագրության միասնության ընդգրկումն է, որ հատուկ է հակադրությունների սիրահար Համաստեղին:

Համաստեղը ցույց է տալիս, որ հողի նկատմամբ կապվածության մեջ պետք է փնտրել ու գտնել երջանկությունը: Լավագույն ռոմանտիկան հողն է ու նրա վրա թափված քրտինքը:

Քննելով մարդու ներաշխարհը՝ Համաստեղն առանձին ուշադրություն է դարձրել սիրո խնդրին («Միջո»): Դա միանգամայն բնական է. չէ՞ որ սիրո մեջ ավելի վառ են դրսևորվում հոգեկան հատկանիշները: Հոգու առեղծվածները վերլուծող արվեստագետին միանում է նաև մարդասերը, որը Միջոյի արտաքին չարաճճիությունների, զանցանքների կողքին պատկերում է նաև նրա երազող հոգին, սիրահարված պատանու հոգեկան հրճվանքներն ու տառապանքները, որոնք, դժբախտաբար, ավարտվում են ողբերգությամբ:

Բնության և մարդու խզման, անհատի փոխակերպության հակադրության կերպար է Կարո Մարսուպը «Անձրև» պատմվածքում: Գյուղաշխարհը ողբերգության եզրին է, բնությունը… անձրև չի պարգևում… Հասարակական հարաբերությունների շղթան խաթարվում է բնության «ողբերգությամբ» կամ այն սահմանային եզրով, որին մոտ էր բնությունը: Երջանիկ ավարտը, երբ Մարսուպը և Ղուկասը հին օրերի նման կրկին նստում են իրենց ամենօրյա խաղը շարունակելու, արտահայտվում է բնության և մարդու նախնական միասնության կապով:

Ուսումնասիրելով Համաստեղի ստեղծագործությունները՝ չենք կարող չնկատել նաև հնի և նորի պայքարը: Այս առումով առանձնանում են երեք ստեղծագործություն ՝ «Անձրև», «Համբույրը» և «Երանոս աղբար»: Նյութը նույնն է՝ հնի և նորի առճակատումը: Նկատի ունենանք, որ այս հարցը գալիս էր դեռևս «Գյուղը» և «Անձրև» ժողովածուներից, որոնք լույս էին տեսել 20-ականներին, ու ծավալվում «Քաջն Նազար ու 13 պատմվածքներ» գիրքը, որը առանձին լույս է տեսել Կահիրեում: Հնի դասերից պետք էր արդյունք քաղել. անցած ստեղծագործական ուղու հին խնդիրներին նոր մեկնություն տալ: Առաջին երկու օրինակներում ակնհայտ է Համաստեղի ազատամտությունը նահապետական կարգ ու սարքի մեջ: «Համբույրը» պատմվածքում Կարո Մարսուպը նահանջում է իր կարծր մոտեցումներից և հաշտվում աղջկա հետ:

Հնի և նորի պայքարում Համաստեղը նորի կողքին է, եթե խոսքը վերաբերում էր զգացմունքներին, սիրուն:

Ակամայից, բայց սրությամբ նորն է պաշտպանում հեղինակը նաև «Անձրև» պատմվածքում և կանգնում Գանձակ Պարսամի կողքին, որովհետև թեպետ նա դաշտի աշխատող չէ, բայց իր «ծառաբնից էր»:

Բոլորովին այլ է Երանոս աղբոր վիճակը (համանուն պատմվածքում), որը հնի և նորի հավերժ երկընտրանքի մեջ է: Չունի աշխատանք, չունի հայրենի եզերք, չունի կին ու զավակներ, բացարձակ մենակ է: Ապրում է միայն հիշողություններով, անընդհատ ծառանում նոր հայացքների դեմ: Ինչո՞ւ:

Թո՛ղ որ հայրենի հողի վրա Կարո Մարսուպը ների իր զավակին, թո՛ղ որ Գանձակ Պարսամը հաշտվի ընկերոջ հետ և նոր բարքեր փորձի հրամցնել: Իսկ մյուս գործերում արդեն այնտեղ՝ ԱՄՆ-ում հայտնված հերոսները, երբ չունեն ոչինչ, երբ հիշատակներով են ապրում, այլևս անզիջում են նորի դիմաց: Վկա «Երանոս Աղբարը» պատմվածքը, որը գրվել է 1945-ին:

Համաստեղն իր գրականության առաջին օրից մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց իր գյուղին և նրա հիշատակներին, և այդտեղ եղավ նրա գլխավոր հաջողությունը:

* * *

Այդ մասին է խոսում նաև ժողովածուում ընդգրկված նրա «կարապի երգը»՝ «Առաջին սեր» վիպակը, որը հրապարակ իջավ կյանքի վերջին տարում: Այն «կարոտի գրականությանը» նվիրված հրաշալի մի ստեղծագործություն է, որը նվիրել է կնոջ՝ տիկին Սրբուհու հիշատակին:

Վիպակը կազմված է երկու անհավասար մասերից: Առաջին հատվածում հերոսի՝ Վահրամի անընդմեջ հասունացումն է մեր առջև, և հեղինակի խոսքն այստեղ ջերմ է շատ, իսկ երկրորդում հեղինակը, որն այստեղ կրում է Հրանտ անունը, դեպքերի ականատեսն ու արձանագրողն է:

Առաջին գլուխը, որը կրում է «Գյուղին մեջ» խորագիրը, մանկությունից դեպի պատանեկության սեմ ընկած հոգեւին ճանապարհն է, որ անցնում է հերոսը՝ իր մեջ կրելով հեղինակի զգայություններն ու ապրումները:

Վեպի հենց սկզբում նկատում ենք հեղինակի նուրբ վերաբերմունքը քաղքենիության նկատմամբ: Օվան Աղայի «տան մեջ կար քաղքենի գույն ու թավշություն: Երկրորդ հարկի վրա շինել տված էր նոր «չարտախ» ու երկու սենյակներ «սետիրներով»: Տաք գույներով գորգեր ու բարձեր վրան. իսկ ձմեռ ատեն վառարանին մոտ «սամավար մը», էրզրումեն բերված:

«*Այդ քաղքենի կարգ ու սարքին ջերմությունը առավելապես Օվան Աղային քաղքենի կինն էր Շուշան Խաթունը, որուն գյուղացիք հաճախ «քաղքըցի» կըսեին: … Գյուղի կիներեն տարբեր կհագվեր: Փոխանակ կտավի, ուներ պասմայեն շալվար ու գլխին կկապեր սպիտակ լաչակ*» :

Վահրամը տասնվեց տարեկան էր տակավին և «*կմեծնար իր հոր՝ Օվան Աղային ծանր շուքին ներքև և իր մոր արևոտ ջերմությունով*»: Երբեք չէր խառնվում ընկերներին, հագնվում էր կոկիկ և մտածում միմիայն սովորելու մասին: «*Վահրամն այնքան էր քաղքենի, որ իր գյուղի ընկերները զինք ծաղրելու համար կկատակեին.*

- Թու՜… թաժա լեպլեպուի հոտ կառնեմ…» :

Բայց տեղի ունեցավ շրջադարձ: Դեպի բուն կյանք նրա շրջադաձը տեղի ունեցավ արբունքի շրջանում: Դասընկերոջ՝ Սիմոնի հետ կռիվը նրա մեջ շատ բան փոխեց. «*Այդ կռվեն հետո Վահրամ ինքն ալ զգաց, որ կմեծնար օրեօր, ոչ անոր*

համար, որ լավ ծեծ մը տված էր Սիմոնին, այլ անոր համար, որ ծեծ մըն ալ տված էր իր մոր թևերու մեջ ապաստան փնտրող փափկակազմ Վահրամին: Ինչպես ամեն բան, այդ ևս իր արբունքին հետ խառնվեցավ» :

Կյանքի հմայքը գունավորվում էր նաև երազով. ուսուցիչը կարդացել էր Մեծարենցի «Ձրտուքը», և պատանին գյուղի արտերի կողքով հոսող առվից լսում էր բանաստեղծության մեղեդին…

Հասունության հետ ավելի հասկանալի են դառնում կյանքի, ընկերության չգրված օրենքները. «*Անոնց հետ էր, որ հետզհետե սկսավ ըմբռնել արևին իմաստը, երբ հասուն ցորյանները արևին տակ ալիք կուտան, երբ կամուրջներու տակի ջուրերուն մեջ արևը կշարմղի, երբ արևը կիյնա իրենց մարմնին վրա: Եվ կարծես այդ շարմղան արևի հետ էին գեղի աղջիկները իրենց շարմղան դեմքերով: Վահրամին այնպես կթվեր, որ ատկից առաջ արևը պաստառին վրա դրված ներկի մը պես էր, երբ մինակ էր, երբ ընկերներուն հետ չէր: Անկից հետո էր կարծես, որ ներկված գույն Մեծարենցի բանաստեղծությունները սկսան ավելի արևանալ*» :

Թեպետ հայրը՝ Օվան Աղան, կտրականապես դեմ էր Վահրամի շրջապատ ընկնելուն: Բայց մայրը՝ տիկին Շուշանը, այլ աչքով էր նայում այս ամենին. «Մեր տղան թող վարժվի նախ ընկեր ըլլալ»: Նույնիսկ վարժապետն է խրախուսում՝ ասելով. «*Վահրամը ինչ ալ ընե, եթե խաղողի գողության ալ երթա իր ընկերներուն հետ, նույնիսկ Մաթո Կարոյին հետ, ինչպես կըսես, ան իր կյանքն է որ կհարստացնե*» :

Հոր միակ մտահոգությունը Մաթո Կարոն էր: Եվ զարմանալին այն է, որ Վահրամն ընկերներից ամենաշատը նրան էր հավանում: Այս կերպարը մեզ հիշեցնում է Համաստեղի մեկ այլ ստեղծագործության հերոսին՝ Միջոյին: Նրա նման գյուղի ստահակ պատանիներից մեկն էր: Կարոն էլ Միջոյի նման շատ վաղ է զրկվում հայրական գուրգուրանքից և մեծանում փողոցներում՝ շների հետ: Եվ որովհետև դպրոցում սովորելը նրա բանը չէր, փողոցն էլ դառնում է նրա կյանքի դպրոցը: «Այս փոքրիկ դևը» այդպես էլ տառաճանաչ չի դառնում: Մոր անվերջանալի անեծքներն ընկալում էր որպես «բնության մեկ մասը»՝ ագռավի կռնչյուն: Կարոն էլ Միջոյի նման օտարված էր միջավայրից և ապրում էր սոսկ երազներով: Նրա մեջ անտես մի պայքար էր ընթանում՝ իրականությունն ու երազը իրար կողքի բերելու: Դրանք իրար միացնողը սերն էր Նազանի՝ Սրապենց փոքր հարսի նկատմամբ: Հեքիաթն ու իրականությունը Կարոյի կյանքում գիրկընդխառն են: Այս տարօրինակ պատանին ուժը, բարությունը, հավատարմությունը և գյուղացիների համար դատապարտելի սերը զուգակցում է զարմանալի պարզամտության, միամտության հետ: Կարոյի հեքիաթային աշխարհում ամեն ինչ խորհրդավոր է: Կարոյի օրինակով Վահրամն էլ է հեքիաթ հյուսում՝ «… *իր և Մարանին աշխարհը: Մարանն էր, որ կարծես կախարդական ուժով մը Վահրամին ոտքերը բռնած էր հողին՝ ինչպես նույն հողը կբռնե ծառին արմատը:… Ավելի գեղեցիկ էր իր գյուղը, և կարծես Մարանն է, որ արևի պես իր գույնն ու ջերմությունը տարածած էր: Ժպիտին, ձայնին ու նուրբ աղջնակի աղվոր կերպարանքին հմայքը կար ամեն տեղ ու իր մարմնին մեջ: Գյուղը իր մարմինն էր*» :

«*Սիրողներն ավելի հանդուգն են իրենց երազներուն մեջ*»,- գրում է Համաստեղը և պատմում Վահրամի «երազի մը հանդգնությամբ» կատարած խիզախ

քայլի մասին. գնում է Մարանենց փողոց ու տեսնում նրան աղբյուի մոտ ոտքերը լվանալիս: Երազը դառնում է իրականություն:

Օ՜հ, որքան գեղեցիկ էր Մարանը: Նրա գեղեցկությանը կրկնակի փայլ էին հաղորդում մազերի երկու հյուսերը, որոնք ընկած էին «շամամների կլորությունով կուրծքին վրա»: Վահրամն ինքն էլ չէր հասկանում՝ երազ է արդյո՞ք, թե՞ իրականություն: Այս հուզախառով վիճակում մոտենում է Մարանին՝ այն դիցային էակին, և բռնում կրծքին ընկած մազերի հյուսքը: Մարանը, ամոթից շիկնած, հազիվ լսելի ձայնով շշնջում է՝ Վահրա՜մ... Իսկ Վահրամի հոգին թևածում էր, ճախրում: Հողն անգամ չէր զգում ոտքերի տակ: Կարծես հայտնվել էր անհայտ մի մոլորակի վրա, ուր ո՛չ տրամաբանություն կա, ո՛չ անհերքելի փաստեր: Ու ինչ-որ ձայն նրա հոգում անվերջ շշնջում էր մի անուն: Այդ Մարանի ձայնն էր, որ իր անունը տվեց:

Բայց Մարանի մազերը քաշելու «խիզախությունը» դառնում է գյուղի խոսակցության առարկա: Ավելին՝ հայրն այդ օրը շատ խիստ է խոսում նրա հետ: Բայց այնքան հոր բարկությունը չէր պատճառը, որ Վահրամը սրտնեղում է, որքան նրա արած մի արտահայտությունը՝ «*Փալանճոնց եթիմ աղջիկ*»: Շանթահարվում է Վահրամն այս արտահայտությունից, որ այնքա՜ն արհամարհական էր հնչում: Մարանի հայրը՝ Փալանճի Արութը, 1895 թվականին ջարդերի զոհերց մեկն էր: Եվ Մարանի մայրը՝ Վարդիկը, կտավ գործելով էր մեծացնում իր որբուկին: Բավականին հետաքրքրաշարժ կերպար է նա (Վարդիկը): Մեր գրականության մեջ, թերևս, նրա նման մտածողները հազվադեպ են հանդիպում: Նահապետական կարգ ու սարքի մեջ տեսնում ենք նրա ազատամտությունը: Դստեր ճակատագրով մտահոգ՝ ձեռնունայն չի նստում: Եվ ցանկացած առիթ օգտագործում է՝ հօգուտ իր նպատակների իրականացման: Այն է՝ Մարանին կնության տալ Վահրամին: Մի առիթով տիկին Շուշանի հետ զրուցելիս ասում է. «*Մարանս տղուդ պիտի տամ, գիտցած ըլլաս: Մարանիս պես աղջիկ ո՞ւր պիտի գտնեք: Աստված խըսմեթ ըրեր է նույն ավազանով: Երկուքին ալ պորտերը նույն մյուռոնով մկրտված*» :

Տիկին Շուշանն ասում է, որ ինքն էլ շատ է հավանում Մարանին, բայց վաղ է այդ մասին խոսելը, որովհետև Վահրամը դեռ պետք է ուսում ստանա: Դրան ի պատասխան՝ Վարդիկն ասում է. «*Հա, էդ էր պակաս, էստեղ քաղքի դպրոցը չէր բավեր: Եվ ավելի մտերմություն ցույց տալու համար ըսավ. «Խոսքը մեջերնիս, քաղքըցի, էս քու մարդը քիչ մը տոնք մեկն է*» :

Մարանի և Վահրամի հանդիպումը կայացնելու համար Վահրամից գիրք է խնդրում, որպեսզի Մարանն էլ կարդա՝ քաջ գիտակցելով, որ գիրքը գրադարանինն է, և Վահրամը երկու շաբաթից պետք է հանձնի: Հետևաբար, պիտի գնար գրքի ետևից Մարանենց տուն: Հիշենք նաև թաշկինակի հետ կապված միջադեպը. «Վ*ահրամ բռնեց ողկույզ, կպատրաստվեր մեկ ձեռքին բռնած թաշկինակը դնել իր գրպանը, երբ մայրը վրա հասավ.*

- Տուր՛, տեսնեմ, տղաս, թաշկինակդ և արդեն առավ ձեռքեն՝ ճարպիկ շարժումով մը ճիշտ այնպես, ինչպես տարած էր գիրքը:

- Մարանս վաղը լվացք պիտի ընե, քու թաշկինակդ ալ կրնա լվալ» :

Հետաքրքիր ու հուզիչ է առաջին ու վերջին հանդիպումը Մարանի հետ: Նրանք այնքա՜ն մոտ էին իրար: Թեպետ խոսքերը կցկտուր էին, բայց երկուսի սրտերն էլ բաբախում էր ուժգին, երկուսն էլ այդ պահին զգացին սիրո ու մարմնի ուժը: Երբ Վահրամը հայտնում է, որ մի շաբաթից մեկնում է ուսման, երկուսի մեջ էլ մի

անբացատրելի տխրություն է ընկնում: Եվ ավելի հուզիչ է բաժանման պահը: Գյուղն իր հեքիաթով «սրինգի մը պես տխուր ամբողջ կարոտ» դարձած Մարանով, աշնան առատությամբ մնում է հեռվում: Մարանի գեղեցիկ դեմքին ինքնատիպ հմայք է տալիս բաժանման թախիծը:

Ու ճանապարհ ընկավ Վահրամը: Գյուղը շուտով հեքիաթ դարձավ: Մոր նամակներով էր ապրում: Նամակներ, որտեղից վեր էր հառնում, վերակենդանանում գյուղն իր ողջ գեղեցկությամբ:

Վեպում հեղինակը կերտել է մի կերպար՝ տիկին Շուշանին, որ համակ սիրո ու քնքշանքի մարմնացում է: Թեպետ քաղաքի աղջիկ է, բայց նրա մեջ քաղքենիությունը շատ ավելի քիչ է արմատներ ձգել, քան ամուսնու մեջ (որն, ի դեպ, գյուղի տղա է): Տիկին Շուշանն ի սկզբանե դեմ էր, որ որդին այդքան հեռու գնա սովորելու: Ի տարբերություն ամուսնու, որ սկզբից լսել անգամ չէր ցանկանում «Փալանճոց աղջկա» մասին, տիկին Շուշանը մայրական ջերմ զգացումով էր լցված Մարանի հանդեպ: Որդու մեկնումից հետո մի առանձին հոգատարությամբ էր վերաբերվում Մարանին, փորձում էր որդու կարոտը նրանից առնել:

Որդուն ճանապարհելուց հետո Օվան Աղան էլ, չգիտես ինչու, նահանջում է իր կարծր մոտեցումներից և մտերմանում Մարանի ու նրա մոր հետ: Ավելին՝ ամեն անգամ քաղաք գնալիս Մարանի համար նվերներ էր բերում:

Աշխատանքի, առատության, խաղաղության ու սիրո պատկերը խարխլվում է շուտով: Գյուղ են հասնում առաջին տագնապալից լուրերը: Սկսվում է Առաջին աշխարհամարտը: Վահրամի ընկերները մեկնում են ռազմաճակատ: Ստեփան Զորյանի «Պատերազմի» Կաղնուտի պես Համաստեղի գյուղն էլ է դատարկվում, կուչ գալիս, կորցնում նախկին աշխուժությունը:

Վահրամը շուտով հայտնվում է Բաթում մեկնող նավի մեջ, միանում կամավորական խմբերին, հասնում Վան ու ռուսական բանակի ճակատագրական նահանջի ականատեսը լինում: Գյուղում կատարվածի մասին նրան պատմում է համագյուղացիներից մեկը՝ Թովմասենց Արսենը, որի կաշին ու ոսկորն էին մնացել: Նրա կմախքացած մարմինն արդեն շատ բան էր ասում. *«Արսենի աչքերուն մեջ Վահրամ տեսավ չարչարանքը իր հովվերգական գյուղին ու զգաց արյան հոսանքով պաղ սարսուռ մը իր մարմնին մեջ»* :

Պատմում է, որ տղամարդկանց մեծ մասը, այդ թվում և Օվան Աղան, սայլերով ճամփա ընկան դեպի Ղարս՝ ապրանք տանելու, և այլևս չվերադարձան: Նրանց բոլորին հավաքեցին և «ջարդեցին նաճախներով»: Իսկ կանայք (որոնց թվում և տիկին Շուշանը, որը Մարանի ձեռքից բաց չէր թողնում) ժանդարմների սպառնալիքների տակ ճամփա ընկան՝ անապատի ավազներին խառնելու իրենց կմախքները:

Գյուղը դեռ հիշում էր 1895 թվականի արյունոտ դեպքերը, բայց չէր ուզում հավատալ, որ մարդ կոչվող արարածի մեջ կարող է կրկին գլուխ բարձրացնել գազանը:

Արսենը պատմում էր չարացած, աչքերի մեջ կարծես դժոխքի գույներն էին բոցկլտում: Թեպետ Վահրամը վաղուց արդեն չէր լսում նրան. *«…հեռացել էր, կարծես ծիավորներու հարձակումին մեջ կորսված իր մոր և Մարանին հետ, իր մարմինն էր, որ անոնց պես չարչարանքի մտած էր»* :

Աշխարհը գունազրկվում է, կորցնում ամեն մի հրապույր: Այս ամենն այն աստիճանի է հալածում Վահրամին, որ ընկնում է հիվանդանոց: Ապա ծանր հիվանդության պատճառով ազատվում է զինվորական ծառայությունից:

Մեր առջև թշվառ հոգեկան կեցության հասած հերոսի մաքառումն է, որը չունի ընտանիք, հարազատներ, հայրենի եզերք:

Ահա այսպիսի սրտառուչ պայմաններում նրա համար որպես փրկարար լաստ հորիզոնում հույսի պես հայտնվում է Ամերիկան, որտեղ ապրում էր հորաքույրը. «*Ամերիկայեն վերադարձող լայն փանթալոնով, գունդ դեղին կոշիկով ու երկու ոսկիե ակռաներով ունևորի մը հետ*» , և հեռացել է հայրենի գյուղից:

Պարոն է այլևս Վահրամն Ամերիկայում, դարձել է ապահովագրական ընկերության գործակալ: Լռակյաց մի մարդ է նա, հաճախ այցելում էր ակումբ: Մի ամբողջ հուշ, ճակատագիր, կարոտի մեծ բաժին քարշ է տալիս իր հետ՝ իր և իր ժողովրդի պատմությունը:

Ամերիկյան հողի վրա նա մտերմանում է Հրանտի հետ, և այն աստիճանի, որ թվացող դյուրությամբ բացում էր սիրտը: Եվ դա բնական է, Հրանտն էլ նույն գաղթողներից է՝ հուզական, մտերմիկ, ազնիվ, կարեկից:

Տարիներ անց միայն Վահրամն իմանում է, որ Մարանն իր տեսած դժոխքից հետո ապրում է՝ «*կյանքին դեմ պայքարելու*» և «*ատելութենեն եկած զավակներուն*» հանդեպ մայրական ամենահաղթ բնազդով:

Ամերիկայում էլ արևներ կան, «*գարունին մեջեն անցնող կիներու մարմնեղեն դյուրաթեք ձևեր*», որոնք «*օրվա արևին ջերմության պես*» այրում են մարդու մարմինն ու հոգին: Վահրամը փորձում է ապրել, զգալ կյանքի հմայքը: Նույնիսկ ունենում է մի քանի հանդիպումներ կանանց հետ, որոնց ապրվածությանը հավատում է, պատրաստ է այն անգամ սեր անվանելու: Բայց ինչքան էլ փորձում է իրեն համոզել, թե «կյանքեն ու աշխարհեն» չի հեռացել, միևնույն է, նրա աշխարհը «*հրո ճարակ եղավ մեր գյուղի կալի ցորենի խուրձերուն պես*»: Ճշմարտությունն այս է. «*Պոսթընի փողոցներեն, որ կքալեի, այդ ես չէի, այլ իմ ուրվականն էր: Իսկական Վահրամը հոն էր, ուր Մարանն իր ոտքերը կլվար*» :

Հերոսը ցմրուր ըմպեց պանդխտության դառնության բաժակը: Չգտավ հաստատուն մի եզերք: Անցյալում մնաց նրա մանկությունը, պատանությունը խեղդվեց 1915-ի պարունակներում: Նա երազում էր այն հողը, որ զգացել էր բոբիկ ոտքով, այն ջուրը, որ հագեցրել էր իր հոգին, իրենց այգաբացն ու մայրամուտի գույները:

Փաստորեն, այսքան ժամանակ Վահրամն ապրում էր Մարանի սիրով ու այդ սիրո հիշատակով ապրելու երջանկությամբ:

Մեր առջև առաջին սերն է, որն այնքան երգվել է գրականության մեջ՝ Իվան Տուրգենևից մինչև Մուշեղ Իշխան: Հերոսն իր մեջ ամփոփում է մի ողջ աշխարհ՝ հայրենի գյուղ, պատանեկություն, կորցրած երջանկություն, կորուսյալ անցյալ, որի ալիքներում զնգում էր կարոտը:

Հերոսն իր մեջ ամփոփում է պայծառ մի կենսագրություն, որը գալիս- հասնում է ինքնակենսագրության նախադռանը, ինչով այնքան հարուստ է սփյուռքահայ գրականությունը՝ մանավանդ նրա սկզբնական շրջանում:

Թերևս հային հատուկ տոկունությամբ Վահրամը «տկարություն» է համարում անցյալի հիշատակներով ապրելը: «*Ուզելով ո՛չ հայրենիք ստեղծվի և ո՛չ էլ*

ազատություն: Պետք է պայքարիլ, արյուն տանիլ»,- ասում է նա: Կյանքը շարունակում է իր բնականոն ընթացքը, և պետք չէ հուսահատության գիրկն ընկնել:

Նա ոչ միայն չտրվեց ժամանակի մեջ խոր ակոսներ բացած հուսահատության հոսանքին, այլև եզակի մի հավատով փառաբանեց գոյության աղբյուրները:

Բնական օրինաչափությամբ մեր գրականության մեջ խոր ակոս է ձգել հայրենաբաղձությունը, վերածվել ցավի, կարոտի, ենթաբնագրում՝ մաքառում ու պայքար գոյատևման համար ու ձուլման դեմ:

Թվում է, Համաստեղն անցկացնում է այն կենսական զգացողությունը, թե ամեն մի հայ, ուշ թե կանուխ, կանգնում է նույն խնդրի առջև՝ դառնալ այդ ահեղ պայքարի, այդ ներքին «ճշմարտության» մի մասնիկ, որը թունդ է հանում կրակվող հոգին: «*Կը հավատամ, որ ամեն մեկ հայ ուժ մը կավելցնե հոն, ու Հայաստան այդ ուժերուն պետք ունի տեր դառնալու իր հոգիին*» ,- գրում է հեղինակը՝ կոչ անելով աշխարհասփյուռ հայերին՝ հետևելու իր օրինակին:

Փորձենք զուգագրել Եղիշե Չարենցի տողերը նոր նշանակությամբ. «*Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է*»:

Նկատենք, որ Վահան Թեքեյանը այս երազն է փոխանցել սերունդներին՝ խոստովանելով. «*Ծնած օրես մինչև այժմ իմ հայրենիքս ինծի հետ տարի ամեն տեղ*»:

Նույն երազն է ունեցել Վազգեն Շուշանյանը: Հազիվ փախեփախից շունչ քաշած՝ կրկին վերադառնալու տենչն է: Եւս մեկ անգամ անդրադառնանք Համաստեղի «Զրույց շունի մը հետ» պատմվածքին. *«…Ճամբա կիյնանք դեպի հայրենի գյուղակը. ավերա՜կ ես ու դուն….: Կոտրված սրտով ես պիտի կենամ ձիթհանքի սյունին քով ու պիտի հնչեցնեմ իմ երգը ավելի հզոր ու ավելի գեղեցիկ: Աշխարհի չորս հովերուն ցրված իմ ցեղակիցները պիտի լսեն իմ երգը ու պիտի գան: Պիտի գան առու շինողներ, վար ընողներ, սերմ նետողներ, հնձվորներ, մանգաղ շինողներ… Մենք բահերով, դիզ-զուռնով պիտի երթանք ու փորենք ակը ջուրին*» :

Կար Ամուն՝ մեկ այլ հերոս՝ «Զոհը Կար ամուն էր» պատմվածքից, դառնում է մտովի տունդարձի զոհը՝ մեքենայի անիվների մեջ փերթ-փերթ լինելով: Վարդանը՝ համանուն պատմվածքից, երազում է հոր ջրաղացը վերստին դարձնել:

Եզրահանգում

Հայ ժողովրդին բնորոշ հավատն առկա է յուրաքանչյուրի հոգում, և նրանք շարունակում են փայփայել տուն վերադառնալու հնարավորությունը, ապրում են ողբերգական երազներով: Եվ պայքարում են այդ երազի համար ու երազի… դեմ, որ հայրենիքը երազի չվերածվի: Բոլորի հոգիներում պայծառ լուսաստղի պես միշտ կենդանի ՝ այդ կարոտալի ու անհնարին տունդարձի տենչը:

Խորհրդանշական վերնագիր՝ «Առաջին սեր»՝ Հայաստանը եղավ ու մնաց Համաստեղի առաջին սերը: Վիպակն իսկապես ինքնակենսագրական է:

Համաստեղի երազանքն էր գալ Հայաստան, բայց քաղաքական, կուսակցական ինչ-ինչ հարցերի պատճառով չիրականացավ իր այդ բաղձանքը:

Այս վիպակը Համաստեղի կտակն է իր ժողովրդին՝ միավորվելու, համատեղ ուժերով հայրենիք ստեղծելու ծրագիրը, որի իրականացմանն էր ուղղված նրա ողջ գրական ժառանգությունը:

Ավարտենք շարադրանքը Գուրգեն Մահարու խորիմաստ խոսքերով. «Մեկնեց անդարձ ու անվերադարձ: Մեկնեց և տարավ իր հետ հայրենիքը տեսնելու, «Հայաստանի հողի վրայ քալելու» մուրազը: Մեկնեց, երբ 70-ամյակի հոբելյանական պսակով զարդարված էր նրա խոհուն ճակատը, երբ շրջապատված էր տոնական հանդիսություններով, ծափերի ու ծաղկեփնջերի մեջ: Ծափերը հանկարծ լռեցին, վերջին խոսքը կիսատ մնաց և հանդիսությանց ծաղիկները իջան նրա դագաղին վրայ» :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գաբրիելյան Վազգեն, Սփյուռքահայ գրականություն, Եր., 1987:
2. Դանիելյան Սուրեն, Ամերիկահայ վիպագիրներ, Եր., «Հայաստան», 1990:
3. Խաչատրյան Մարգարիտ, Համաստեղի ստեղծագործությունը, Եր., 2004:
4. «Համաստեղ 1895-1966» / 50 ամեայ յոբելեան Համաստեղի գրական գործունէութեան, կազմ.՝ Ռուբէն Դարբինեան, Արամ Հայկազ եւ ուրիշներ, Նիւ Եորք:
5. Համաստեղ, Երկեր, Ա, Պեյրութ, մատենաշար «Համազգային», 1966:
6. Համաստեղ, «Ինքնակենսագրական», Երկեր, Ա, Պէյրութ, «Համազգային» մատենաշար, 1966:
7. Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Եր., 1989:
8. Համաստեղ, Սպիտակ ձիաւորը, հ.1-ին, Լոս Անճելըս, 1952:
9. «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 1995 թ. Նոյեմբերի 3:
10. Շահինեան Գրիգոր, Համաստեղ, Պէյրութ, 1961:
11. Չոպանյան Արշակ, Երկեր, Եր., «Խորհրդային գրող», 1988:
12. Սեւան Գեղամ, Սփյուռքահայ գրականության ուրվագծեր / 1920-1945 թթ., Եր., 1980: